**2025-2026 ՈՒՍՏԱՐԻ**
**ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ**

**10 - ՐԴ ԴԱՍԱՐԱՆ – տևողությունը՝ 90 րոպե**

**1.Նշվածներից ո՞րն է «աշխարհազոր» հասկացության բնութագիրը:**
1.Բանակին օգնելու համար կազմակերպվող ժողովրդական ջոկատ:
2.Կանոնավոր բանակին օգնելու համար կազմակերպվող ժողովրդական զորք:
3.Կանոնավոր բանակին օգնելու համար կազմակերպվող կամավորական զորք:
4.Պատերազմի ժամանակ առանձին ջոկատներին օգնելու համար՝ ժողովրդական բանակ:

**2. Հայկական լեգիոնը ո՞ր պետության զինված ուժերի կազմում է հանդես եկել:**
1.Հունաստան 2.Ալբանիա 3.Ռուսաստան 4.Ֆրանսիա

**3.Առաջին աշխարհամարտում ո՞ր ճակատի հրամանատարն էր մարշալ Ալենբին:**
1.Պաղեստին 2.Երուսաղեմ 3.Կաhիրե 4.Լիբանան

**4. Ո՞ր տեղանունների առաջին բաղադրիչներից է բաղկացած «Կապարգողթ» անվանումը:**
1. Կարին, Արմավիր, Գողթն 2. Կարմիր, Արտաշատ, Գորիսյք
3. Կապան, Արնիք, Գողթն 4. Կապան, Արմավիր, Գողգոթա

**5.Ի՞նչ է նշանակում «խութու» բառը, որն ընկած է «Խուստուփ» անվանման հիմքում:**
1. Աղոթարան 2. Խորհուրդ 3. Աղոթք 4. Աղոթրան

**6. Նժդեհի կիրառած մարտավարության համաձայն՝ առաջին հերթին վերլուծվում էին հակառակորդի ռազմական կարողություններն ու գործելաոճը, որից հետո մշակվում էր դրան համապատասխան մարտական գործողությունների պլանը: Ո՞րն էր մարտական գործողությունների Նժդեհի մշակած պլանի առանցքը:**
1. Հակառակորդի հետ դեմ առ դեմ մարտի դուրս գալը:
2. Հակառակորդին անընդհատ կրակի տակ պահելը:
3. Հակառակորդի համար անծանոթ գործելաոճն ու հարվածի ուղղությունը:
4. Դիրքային ձգձգվող կռիվները տալը:

**7. Ի՞նչ է փամփուշտը:**
1.Զինամթերքի տեսակ է:
2.Մեջը գնդակներով լցրած, բռնկվող լիցքով ու հրապատիճով զինամթերք է:
3.Ագուցված գնդակով (կամ մեջը լցրած գնդակներով) բռնկվող լիցքով ու հրապատիճով զինամթերքի տեսակ է:
4.Ագուցված գնդակով, բռնկվող լիցքով ու հրապատիճով զինամթերքի տեսակ է:

**8. Ի՞նչպես է ազդում ծանրության ուժը գնդակի շարժման վրա:**
1. Արագացնում է գնդակի թռիչքը: 2. Շրջում է այն գլխամասով հետ:
3. Դանդաղեցնում է գնդակի թռիչքը: 4. Շեղում է գնդակը նետման գծիցը:

**9.Ո՞րն է համարվում կոորդինատային առանցք:**
1. Այն ուղիղն է, որն ունի զրո կետ և բաղկացած է դրական ու բացասական ուղղություններից:
2. Այն ուղիղն է, որի վրա ընտրված է սկզբնակետ:
3. Այն ուղիղն է, որի վրա ընտրված է սկզբնակետ, դրական ուղղություն և միավոր հատված:
4. Այն ուղիղն է, որն ունի դրական ուղղություն և միավոր հատված:

**10.Համապատասխանեցնե՛լ:**
**Նշված ճակատամարտերում մասնակցած հայկական զորքերի քանակը:**

| | | |
|---|---|---|
| 1 | Զիրավի ճակատամարտ | Ա. 70-80 հազար |
| 2 | Արածանի ճակատամարտ | Բ. 3 հազար |
| 3 | Ավարայրի ճակատամարտ | Գ. 90 հազար |
| 4 | Խոշաբիի ճակատամարտ | Դ. 18-20 հազար |

1. 1-ա. 2-բ, 3-գ. 4-դ  2. 1-գ. 2-դ. 3-ա. 4-բ  3. 1-բ. 2-գ, 3-ա. 4-դ  4. 1-գ. 2-դ, 3-ա. 4-բ

**11.Համապատասխանեցնե՛լ:**

| | |
|---|---|
| 1. Հովհաննես Հախվերդյան | ա.1920 թ. նոյեմբեր-դեկտեմբեր: |
| 2. Քրիստափոր Արարատյան | բ.1920 թ. ապրիլ-նոյեմբեր: |
| 3. Ռուբեն Տեր-Մինասյան | գ.1919 թ. մարտ -1920 թթ ապրիլ: |
| 4. Դրաստամատ Կանայան | դ.1918 թ. հունիս-1919թ մարտ: |

1. 1-դ, 2- գ, 3-բ, 4-ա  2. 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ  3. 1-ա ,2-բ, 3-գ, 4-դ  4. 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ

**12.Համապատասխանեցնե՛լ:**

| | | |
|---|---|---|
| 1 | Գազախողովակ | Ա. Փամփուշտը մղում է փամփշտանոց, փակում է փողանցքը, հարվածում է հրապատիճին և փամփշտանոցից հանում է պարկուճը (փամփուշտը) |
| 2 | Հետադարձ մեխանիզմ | Բ. Գազամխոցի շարժմանն ուղղություն տալու և կրակելիս ձեռքերը այրվածքներից պաշտպանելու համար է: |
| 3 | Փականակ | Գ. փականակի շրջանակը փականակի հետ միասին առջևի դիրք վերադարձնելու համար է: |
| 4 | Սվին դանակ | Դ. Գրոհից առաջ միացվում է ավտոմատին և ծառայում է հակառակորդին ձեռնամարտում ոչնչացնելու համար: |

1. 1-ա. 2-բ, 3-գ. 4-դ  2. 1-դ. 2-բ. 3-ա. 4-գ  3. 1-բ. 2-գ, 3-դ. 4-ա  4. 1-գ. 2-դ, 3-ա. 4-բ

**13. Համապատասխանեցրու՛:**

| | | |
|---|---|---|
| 1 | Արսեն Շահմազյան | Ա. Սյունիքի զինված ուժերի ընդհանուր հրամանատար |
| 2 | Պողոս Տեր-Դավթյան | Բ. Կամավորական 5-րդ ջոկատի հրամանատար |
| 3 | Գարեգին Տեր-Հարությունյան | Գ. «Զանգեզուր Ղարաբաղ մարզային խորհրդի» ընդհանուր կոմիսար |
| 4 | Արշակ Ջանփոլադյան | Դ.Միհիանի աշխարհազորային ջոկատի հրամանատար |

1. 1-ա. 2-բ, 3-գ. 4-դ  2. 1-գ. 2-դ, 3-ա. 4-բ  3. 1-բ. 2-գ, 3-դ. 4-ա  4. 1-ա. 2-դ, 3-բ. 4-գ

**14.**Առաջին և երկրորդ դիրքերից որոշում էին միևնույն աշտարակի հեռավորությունը: Աշտարակը առաջին դիրքից դիտվում է 5 հազարերորդական անկյան տակ, իսկ 2-րդ դիրքից՝ 2 հազարերորդական անկյան տակ: Գտնել աշտարակից 1-ին դիրքի հեռավորության հարաբերությունը աշտարակից 2-րդ դիրքի հեռավորությանը:

1. 2  2. 7  3. 0.4  4. 3

**15.Համապատասխանեցնե՛լ:**

| | | |
|---|---|---|
| 1 |  | ա) Խաղողի այգիներ |
| 2 |  | բ) Մրգատու այգիներ |
| 3 |  | գ) Մարզագետին |
| 4 |  | դ) Հիմնական հորիզոնականներ |

1. 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ  2. 1-բ, 2-գ, 3-բ, 4-գ  3. 1-ա ,2-բ, 3-գ, 4-դ  4. 1-դ, 2-դ, 3-ա, 4-բ

16.Սիրտ անոթային վերականգման ժամանակ ներփչողը քանի րոպեն մեկ պետք է ստուգի անոթազարկը:

17. Մինչև 1 տարեկան երեխան մեկ րոպեում քանի՞ անգամ է շնչում:

18.Ճառագայթային վթարների դեպքում, լսելով «Ուշադրությու՛ն բոլորին» ազդանշանը, յոդային կալիումի բացակայության դեպքում քանի՞ տոկոսանոց յոդի լուծույթ է պետք օգտագործել:

19. Քանի՞ մասից է կազմված ինքնաձիգի հետադարձ մեխանիզմը:

20. Զորամասը ինքնակամ թողած զինծառայողը քանի՞ օր բացակայության դեպքում է ենթարկվում քրեական պատասխանատվության: